


ՏՐԻ ԵՒ ՏՆՈՐԻՆ  
 Ե. ՓՈՐՈՍՅԱՆ  
 Եամակ կամ որ եւէ  
 զրու թիւն պէտք է ուղղել առ  
 Տնօրին. ԱՐՇԱՂՈՅՍ յրազրի  
 ԳԱՂԻՐԷ (Եգիպտոս)



ՔԱՆԱՆՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ  
 Երկրորդ շաբաթ  
 Տարեկան ուղղակի 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴԻՆ  
 Տարեկան Ցրակ 20  
 Վեցամսեայ « 12

E. POROSSIAN  
 Direc.-propr. du journal arménien  
 ARCHALOUYCE  
 LE CAIRE (EGYPTE)


Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ


ԲԱՃԱՆՈՐԴԱԿՆԸ ԿԱՆՈՒԿ  
 Եւ թղթատարի ծախքը  
 Խոնարհութեանս վրայ է :  
 Խոնարհութեանս ուղղութեամբ  
 Գրութեանս էս չ'են տրուիր  
 \*  
 Ա.Զ.Գ.ՐԱՍՏԱՐԻՆԻՔ  
 Կանխիկ վճարելի են

ԳՈՐԾ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ



« Արշալոյս » ի ծառայր առաջիկայ Եր-  
 րորդ շրջանի սկիզբէն (1 Օգոստոս) 5 սի-  
 նակներու վերածել որոշուած ըլլալով, գը-  
 րաչարներու պէտքը զգալի պիտի լինի. և ու-  
 րովհետեւ Եգիպտոսի մէջ այդ արհեստին  
 հետեւողները հազուադէպ եղած են՝ ասկէ  
 առաջ տպագրութեան գործը շատ սահմա-  
 նափակ լինելուն համար, հարկ է որ գրա-  
 շարութիւնը այլ ևս արհեստներու կարգը  
 անցնի և անորմով զբաղողներ գտնուին :  
 Աւստի անոնք որ կը փափաքին գրաշա-  
 րութիւն ուսանիլ և իրենց ապրուստի միջոց  
 հայթայթել, թող դիմեն թերթիս մտադը-  
 րատունը, ուր վարժ գրաչարի մը առաջնոր-  
 դութեամբ քիչ օրէն արհեստի մը տէր ա-  
 տի լինին :

ՔԱՅԼ ՄԸ ԵՒՍ



Եգիպտական գաղութը քայլ մը ևս  
 յառաջացաւ ազգասիրական ճամբուն մէջ,  
 հիմնելով « Հրատարակչական Ընկերութիւ-  
 նը » որուն անդամակի գործն եղաւ մեզ օժ-  
 տել զուտ ազգային յիշատակարանով մը :  
 Արգարեւ Ազգային Սահմանադրութեան  
 երկրարբան (Հայերէն և Թուրքերէն) գար-  
 ձեալ տպագրութիւնը գրեթէ կ'ապահովէ յա-  
 ւերժացումը յիշատակին առանձնաշնորհու-  
 մի մը, որուն նմանը — ճշմարտութիւնն ը-  
 սելու համար — թուրքապատակ ո՛չ մի ազ-  
 գութիւն չ'ունեցաւ, և որ երեսուն տա-  
 րիներ մեզի տուաւ գոյութեան իրաւունքի  
 մի զգլխիչ պատրանքը : Հիմայ, թէ և այդ  
 առանձնաշնորհումին հոգին մեռած է, և  
 ապագային համար ալ բոլորովին անբաւա-  
 կան է, գարձեալ շահեկանութենէ զուրկ  
 չ'է՛ ձեռքի տակ ունենալ յիշատակարան մը,  
 որուն տեսքը միայն պիտի բաւէ, մեզմէ  
 շատերուն յուշարեւելու շարք մը Մայիս  
 24 երու գոզորիկ, քնքուշ, երբեմն ալ  
 կսկծալի միջազգայն և տեսարաններ գրո-  
 շազարդ, մեզմօրօր շոգեմաններու, Պէյ-  
 դոզի ստատիտ անտառակներով կամ Պա-  
 լըզլի հանգստաւէտ մեռելաքաղաքին մէջ :  
 Բայց չ'է թէ այդ տեսարակին 3 այլ  
 անոր տպագրութեան ձեռնարկով և յաջո-  
 ղութեամբ ի գլուխ հանող մարմնոյն — Նո-  
 րակազմ՝ Հրատարակչական Ընկերութեան —  
 և այդ առթիւ մեր ընկերութիւններու վը-

րայ կը փափաքիմ՝ քանի մը խօսք ըսել :  
 Այն որ հայու արիւն կը կրէ — գրեթէ  
 խիստ քիչ բացառութեամբ — իր անձնա-  
 կան փորձառութեամբը գիտէ որ մեր մէջ  
 Բարեկործակիւն ընկերութիւնները վարդէն  
 աւելի վաղաթառամ են, առանց անոր գե-  
 ղըն ու բոյրն ունենալու :  
 Անցած տարի « Նոր-Օր » ի առաջին թի-  
 ւերէն մէկուն մէջ, իմ անձնական գաղա-  
 փարս ընդարձակօրէն յայտնած էի մեր (Բա-  
 րեկործակիւն) ընկերութեանց վիժելուն  
 պատճառներուն վրայ : Կրկնաբանութեան  
 մէջ չ'իյնալու համար, այսօր կը յաւելում  
 թէ մեր այդ ընկերութիւնները կ'իյնան  
 վստայի ամենքնիս ալ անհատապէս չափա-  
 զանց անձնամոլներ ենք, և ո՛չ բաւական  
 անձնասէր :  
 Թերեւս կարծող ըլլայ որ իմ այս ա-  
 ռաջագրութիւնս իր հակասութեամբը մի-  
 այն ճշմարիտ կրնայ ըլլալ : Այդ առերե-  
 ւոյթ հակասութիւնը շուտով կ'անհետի եթէ  
 անձնատեղի և անձնատեղ բառերուն յարակից  
 պայմաններն ու հետեանքներն ինկատի առ-  
 նուին : Անձնատեղութիւնը բարոյական արտ-  
 մէ՛ք, որուն բանաձևն է « Ես միայն » . մինչ-  
 դեռ անձնասիրութիւնը ընտանուր իրաւունք  
 մ'է՛, ասոր համար է որ անձնասիրութիւնը ( )  
 կ'ըլլայ առաքինութիւն :  
 Որեւէ ասպարէզի մէջ, ուր մենք կը  
 ջլատուինք, անկարողութեան կը մատնու-  
 ունիք, և՛ շատ անգամ՝ արդէն գոյու-  
 թիւն ունեցածն ալ հիմնայտակ կ'ընենք  
 մեր անհատական անձնամոլութեամբ, ու-  
 րիչ ազգեր կը խրախուսուին, կը զօրանան,  
 կը հնարեն և կ'ստեղծեն իրենց անհատա-  
 կան անձնասիրութեամբ :  
 Անգամ մը աչքէ անցուցէք աշխար-  
 հիս չորս կողմը. ամեն տեղ պիտի տես-  
 նէք Հայկական գաղութներ, բայց տեղ  
 մը պիտի տեսնէք համերաշխութիւն, մի-  
 ութիւն, սերտ՝ անկեղծ՝ անհաշիւ յարա-  
 բերութիւն այդ համարիւն, համակրօննե-  
 րու մէջ : Չեմ կարծեր. չ'եմ կարծեր ու-  
 րովհետեւ մինչև ցարգ լսուածը, կարգա-  
 ցուածը, տեսնուածը և գործերը ատոր  
 հակառակը կը հաստատեն :  
 Մինչև անգամ մամուլը, որ ուրիշ  
 ազգաց համար լուսասփիռ և կենսաբաշխ  
 ալլելիւր մ'եղած է, խաւարաստեղծ, ան-  
 բարոյականացուցիչ, մահատու և՛ ըսելը

ամօթ է՝ գրամաշարութեան (Chantage) ( )  
 գործիքի մը վերածումս է մեր մէջ, քիչ  
 բացառութեամբ . . . :  
 Առանց խօսելու Եւրոպացիներու վրայ,  
 որոնք — թերեւս մեզմէ աւելի զարգացեալ  
 ըլլալով — աւելի ձեռնհասութիւն, աւելի  
 գիտակցութիւն ունին իրենց գաղութնե-  
 րուն մէջ ընկերութիւններ կազմելու, զա-  
 նոնք զարգացնելու, պահպանելու և պատ-  
 կառելի ընելու գաղտնիքը, իբր օրինակ  
 մէջ կը բերեմ քաղաքիս խափնիտուն մէկ  
 հատիկ ընկերութիւնը :  
 Այո՛, այդ Ենթադրութեան ինչպէս սովո-  
 րած ենք ըսել՝ Գահիրէի մէջ ունին մէկ  
 հատիկ ընկերութիւն, որուն տարիքը քը-  
 սանուհիդը չ'անցիր : Բայց ի՞նչ խեղճ  
 ու կրակ ընկերութիւն : Ես ըսեմ, դուք  
 դատեցէք :  
 Այդ հաստատութիւնն ունի իր մեռե-  
 լաւարձ կառքերը, զս՝ առանց խարու-  
 թեան՝ ամեն ազգերու տրամադրութեան  
 տակ գրած է, անոնց անկար ննջեցեալնե-  
 րը ճիշտաբար փոխադրելու համար ո՛ւր որ  
 գիտէք : Ունի նաև իր չորս հաս դպրոց-  
 ները (թեմականներէն զատ), որոնց շը-  
 շանաւարտներուն առջև կառավարական  
 գունդը բաց են, ձեակիրպական քննութե-  
 նէ մը ետքը . ունի իր դեղարանները,  
 ուր կը գարմանուին ճիշտաբար ամեն ազգի  
 աղքատներ : Ունի իր բժիշկները, նմա-  
 նապէս ճիշ, չբաւորներուն համար, ևն :  
 Հիմայ դէմ առ դէմ բերէք այս մի-  
 ալ ընկերութեան գործերը մեր ստուա-  
 բաթիւ ընկերութեանց միացեալ . . . ճը-  
 րագիրներուն հետ, և վստահ եղէք որ  
 յաղթութիւնը մենք պիտի ամսինք թուղ-  
 թի վրայ :  
 Միթէ մեր անձնամոլութեան մի ան-  
 ժխտելի ապացոյցը չ'է՞ գոյութիւնը՝ Գա-  
 հիրէի մէջ՝ հինգ հատ (ներեցէք քիչու-  
 թիւնը) սրբախնամ ընկերութիւններու :  
 Միեւնոյն քաղաքի մէջ հինգ հատ համա-  
 նապատակ ընկերութիւններ . . . այսպիսի ե-  
 աւանդ, ընկերութիւններու այսքան առա-  
 տութիւն ո՛ւր տեսնուեր է Իրաւ է որ մեր  
 յեղափոխականներն ալ խաղաղասէրներէն  
 նուազ խանդալիւր չ'են . անոնք ալ ունին  
 իրենց հայրենաշատ հինգ հատ իրերամարտ  
 ընկերութիւններ . . . : Առանց ալ կրնանք

( \*\*) Chantage իրական կամ երեսակայական  
 գաղտնիք մը հրապարակելու, պատիւ մաշակելու  
 ապստամբութեամբ ուրիշի դրամ շորթելու դրաքիւնն  
 է, զոր օրէնքը անխաւսած եւ պատժու չ'ենարկած  
 է :

( \*) Այսինքն գաղափարի մը կամ անձի մը  
 սիրոյն հաւան իր անձը սիրելու, հոգալու իրա-  
 տելեկն յօժարակաւ հրաւարելու գործողութիւնը :

հակադրել Մակեդոնական մէկ հատիկ և Հելլենական մէկ հատիկ յեղափոխական կամ ազատագրական ընկերութիւնները : Մեր ընկերութիւններուն քանակը չլացուցիչ է բայց որակը . . . . :

Ամեն ձեռնարկ, ամեն գործ անձնութիւններու կը կարօտի արդիւնաւոր ըլլալու համար : Անձնամուտութիւնը՝ արմատախիլ ընելով մեր անձնութիւնը, անհնար ըրած է որ և է անձնասիրութիւն :

Ըսի որ անձնամուտութիւնը այստ մ'է . բայց անբուժելի այստ չ'կայ՝ մասնաւորութիւնէ դարմանուելու բարի կամեցողութիւնն ունենանք : Մեր այդ տրամադրութիւնն ալ սերիչ կերպով չ'ենք կրնար արտայայտել բայց միայն քաջալերելով և՛ ի հարկին պաշտպանելով հաստատութիւններ որոնց յայտնի և քաջալերելու նպատակն է լոյս, այսինքն գեղ ջամբել :


Յուսալի է որ նորակազմ Հրատարակչական ընկերութիւնը — որուն ծրագիրը մեզի անյայտ է տակաւին — անձնամուտներ չը պիտի ունենայ իր մէջ և պիտի ճգնի ըլլալ մին այն յորջ միջոցներէն, որոնց գոյութիւնը և պահպանումը անհրաժեշտ է ազգին շահուն : Կը սիրենք յուսալ նաև որ իր յաջորդ հրատարակութիւնները աւելի դրականապէս օգտակար հանգամանքներ պիտի ունենան, իրեն համակրողները չ'յուսակալու և ազգայնոց օժանդակութեան արժանի ըլլալու համար :

Եւ առ այժմ անկեղծաբար շնորհաւորենք գէպ յառաջ առնուած այս նոր քայլը :

Պ .

**ԲԱՂԳՈՍԽԱՂԸ**

(Շարև . նախորդ քիւռն ևս վերջ)



Հարաւային եւրոպոյ մէջ տեղ մը կայ որ աշխարհահռչակ է, ո՛չ թէ իր հոյակապ շէնքերով, ծաղկեղ զաւարտականութեամբ, բարգաւաճ ուսումնարաններով և զարգացեալ ժողո-

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ (9)

**ԵՐԵՎԱՆԻ ՄԸ**

ԿԱՄ

ՊԱԽԱԼ ՍԱՐԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ

(Շարև . նախորդ քիւռն)

Մանօթ բոլոր երգերը որոնցմով գիշեր ցորեկ կը թնդան բոլոր Պոլսոյ փողոցները . միայն երգեր ուր ցաւը և սէրը յաճախ կատակերգական են, խեղդատակ, շատ լուրջ բաներուն պէս որոնք պէտք եղած ձեւով չ'են արտայայտուելի . . . :

Բնականաբար, «Միմուսակ», «Մինչև մահուան անյիշատակ ի շիրիմ», «Մայր Արաբի» ի պէս երգեր չ'են լսուէր, ինչպէս բարձր սարօններուն մէջ . մեր մարդիկը զուարճանալ կուզէին, միւլիքը կ'ըմբռնէին իբր զընտանեկան գերագոյն մէկ միջոցը, ծիծաղին գաշնակաւոր ձեւը աւելի : Այդ տեսակ մեղաւաղածու երգեր կ'ըմբռնային իսկ, վտանգ եմ որ փութով պիտի վանէին . . . Փափկասուն օրերով և նիհար պարօնայք թող իրենց պահեն զանոնք :

Մոռցայ բսերու որ Միսայրճին կ'ընկերանար իր նուագածուին . նոյնը կ'ընէին բազմութիւն անձեր, ընդ որս և կ'իներ : Կ'երեւակայէ՞ք ի՞նչ խտոնակութիւն, ի՞նչ շարձայնութիւն : Աւելի աղաղակներ կ'արձակէին քան

վարդովը, այլ որովհետև հոն կան մասնաւոր վայրեր, զարգարուն սրահներ, հանգստաւէտ նստարաններ, մանդոնի սեղաններ աշխարհի հոշակաւոր խաղամուսնուհի համար : Մօնագօ կոչուած տեղը Յ քառակուսի մզոն տարածութիւն ունեցող միջազգային չէզոք երկիր մըն է որուն անկախութիւնը ճանաչուած է բոլոր տէրութիւններէն : Այս փոքրիկ պետութիւնը հաստատուած է կեդրոն ըլլալու բաղադրաւոր : Աշխարհի բոլոր խաղամուսնուհի հոն կ'երթան իրենց այս կիրքը յագեցնելու : Հոս է Մօնթէ-Քարթի ընչակուլ կազմին . բայց այս կազմին մէջ ուշագրաւ վայրը այս երկրին մէջ, սոյն կազմին կից գտնուած պարտիզին մէջի գերեզմանատունն է : Այս գերեզմանատան մէջ կը թաղուին միայն անձնասպաններ և ուստի զանիկա անձնասպաններու գերեզմանատուն կոչուած են : Այս գերեզմանատան մէջ թաղուած մեռելներուն թիւը այնչափ մեծ է որ յաճախ անոնք իրարու վրայ կը թաղուին : Քանի որ արդեօք այդ վայրը կուլ տուած է որ այսպէս միայն քան փարայով սկսան և այն ալ լոկ հաճելի ժամանց մը ունենալու նպատակաւ : Արդեօք քանի՞ տաղանքներ հոս խորտակուած են, ի՞նչ հարստութիւններ փճացած են . ի՞նչ տաք արցունքներ թափուած են . ի՞նչ անէծքներ կարգացուած են . ի՞նչ աղեկատու աղաղակներ օղբ հնչեցուցած են . ի՞նչ ընտանիքներ աւերման մատնուած են . ի՞նչ որբուկներ անտէր փողոցները մնացած են . ի՞նչ որբուկներ իրենց ծննդեան օրը անիծած են . և բոլորը որովհետև առաջին սխալ քայլ մը առին, որովհետև անմղ կարծուած խաղով մը զուարճանալ ընտրեցին : Երեւակայութեամբ վայրկեան մը կ'անդ զայնք մօնթէ-Քարթի արտաքին դրանը առջև և գիտենք հոն մտնող կըլղները : Կը տեսնեն սա երիտասարդը որ ժպտուն գեմքով, հաստատուն քայլերով և յաղթական կերպարանքով ներս կը մտնէ : Յայտնի է թէ անոր գրպանները ծանրացած են ոսկիներով և թղթապանակը թանձրացած է զրամաթղթերով : Բայց կրկին նայէ, ահա կը վերադառնայ : Ի՞նչ գեղեկոտ քայլեր, ի՞նչ գունատ դէմք, ի՞նչ յուսահատական երեւոյթ : Ուր կ'երթայ, քայլերը դէպի ո՞ր կողմ կ'ուղղուին : Աւա՞ղ, անձնասպաններուն պարտէզը . հոն վերջ տալու իր կեանքին : Կորսնցուցած է ամեն բան . քակը գտտարկ է . միտքը ցնորած է . միտն է չուրջը . այսուհետև չ'արժեք ապրիլ այս կեանքը : Ենթադրենք թէ այս նոյն

թէ կ'երգէին . Որ՞ու հոգ : Խառնակ ու անկարգ երաժշտութիւնը զուարթութիւն միայն կ'արտադրէ, — օրինակ՝ էջուս զոնչը, — մինչ կանոնաւոր ու հանդարտ երգեցողութիւնը, նոյն ի՞նչ կ'ըմբռնէր զուարթ ըլլայ, արտութիւն կը ծնի : Մեր մարդոց ուզածը զուարճանալ էր . ու կը զուարճանային : Կը կարծէ՞ք որ երաժշտութիւնը դադրեցուցած էր ուսուլը և խօսիլը . քնա՞ւ, երեք տէրանց միանդամայն կը ծառայէին մեր իսկիւտարցիները, և այնպէս մը որ ոչ մէկուն «խաթը» կը մնար, ոչ մէկը կը զոնուէր միւսին : Կը խօսէին, կը կատակէին, կը խնդային : Ժողովրդային սըլու մտութեան բոլոր ծաղրանոթութիւնները, բառախաղերը կ'երթային ու կուզային անվերջ կերպով, վրայ բաց բառեր, «անվարտի» խօսքեր առանց ամօթխածութեան կը շքրջազայէին սենեակին մէջ, քրքիջներով ծափահարուած . . . :

Այսպէս՝ օղի առաւել երաժշտութեամբ առաւել քրքիջով փառաւորապէս կը սունուէր Պախալ Սարգիսին անունը, և Տանտէրը կը գիտէր այս տեսարանը, ու քանի գիտէր՝ կ'ուռնար գոհուողութեան սրկի մը պէս .

— Հա՛ տղաք, ձեզ տեսնա՞մ ի՞նչ ըրէք, խաղացէ՞ք, խնդացէ՞ք :

Թող ընթերցողները չի զարմանան երբ ըսեմ թէ այդ նեղ ու խճողուած սենեակին մէջ քանի մը անառակներ «հօռս» քաշեցին : Իրաւ է թէ քանի մը ոտքեր ճմուռեցան, քանի մը ամբողջ տապալեցան, և քիչ մնաց որ սեղանը գլխիվայր շքրջ պարզի մը աքայցի հարուածէն :

երիտասարդն էր որ մի քանի ամիս առաջ գիւմարգ առի սրճարանին մէկ տնկիւնը և քան փարանոց բաղադրաւոր ժամանց մը ունեցար . այլևս կրնա՞ն այդ խաղի սեղանին մօտեցալ, կրնա՞ն խղճի մտօք այդ թուղթերը ձեռք առնել . կրնա՞ն մինչև իսկ այդ սրճարանին սեմէն ներս մտնել և զգալ թէ շիտակ բան մը կ'ընես :

Կրկին, բաղադրաւոր մարդուն նկարագրին կ'ազդէ և անոր հոգեւոյն լաւագոյն իրձերը կը թունաւորէ : Լոնտոնի մեծ բանակներուն միոյն մէջ երկար ժամանակ պաշտօն վարող երէց մը, բանտարկեալներուն բարոյական վիճակին վրայ տեղեկագրելու առեն այսպէս կ'ըսէ : «Պաշտօնավարութեան միջոցին ամեն տեսակ ոճրագործներու հանդիպեցայ, որոնք կը պատկանէին ընկերութեան ամեն դասակարգերուն : Անոնց մէջ կային լրտեսեր և աշխուհակներ, արհեստաւարներ և կղերականներ որ զանազան ոճիւրներով բանտարկուած էին : Անոնց շատերուն հետ բարեկամացայ և շատերուն ներքին զգացումներուն տեղեկացայ : Բայց ամենէն աւելի ուշ սքրութիւնս գրաւող կէտը սա էր թէ մինչ իւր սքանչիւր յանցաւորին սրտին խորքը կրնայ զտնել բան մը որ բարութեան հանգամանքը ունէր . բաղադրաւոր արտաքրած ոճրագործները այս ասորէն զուրկ էին : Ամբողջ փորձառութեանը ընթացքին մէջ կերէք չ'զոք բարի բան մը այն մարդուն սրտին մէջ գոր բաղադրաւոր աւերած էր : » Ասեկա սոսկալի իրողութիւն մըն է և պէտք է խորհել տայ անոնց որ թեթեւամտութիւն կը խօսին խաղամուտութեան շարժեցումներուն վրայ : Այս վիճակները լսելէն յետոյ գիւրդին չ'է ըսել թէ բաղադրաւոր անմղ դրօսանք մըն է :

Անցեալ օր այս խնդրոյն վրայ վիճաբանութիւն մը ունեցայ բարեկամիս մէկին հետ որ տածան աշխատող արհեստաւոր մըն է : Անիկա կը պնդէ թէ բաղադրաւոր շատ օգտակար ըզրօսանք մըն է իրեն պէս աշխատաւորներուն համար : Երբ, կ'ըսէ, կ'ըսէ «նստիմ նստարան առջևը կ'ամ խաղի թուղթերը ձեռքս կ'առնեմ, ամեն արտութիւն կը փարստի, յոգնած անգամներս կը կազդուուին, և միտքս կը հանգարտի : Մէկ ժամու խաղի զրօսանքը աւելի օգուտ կ'ընէ ինձի քան ժամերով քնանալը կամ գանդաղօրէն ասդին անդին յաճիլը : Այս փաստաբանութիւնը թէև համոզիչ կը թուի, բայց խորազնին քննելով պիտի տեսնենք թէ այնպէս

— Գիշ մը սուս եղէք անա՛ն, գիտես ի՞նչ Տիգրանիս ձայնը առի : Կ'ըլլայ բարոյր յէն արթնցած ըլլայ :

Տանտիւրուհին է որ ականջը տնկած մըտիկ կ'ընէ .

— Իմ անկախալ ալ տատնկ բան մը կուզայ կոր, կ'ըսէ Ֆուլիկ Տուտուն :

Բացարձակ լուրջութիւն մը ինկաւ սենեակին մէջ . և այդ լուրջեան մէջ, ի՞նչ լսես, ազատ ու միմտ կը բարձրանար աղու մը լացը :

— Վո՛ւյ ձիւները գլխուս, ըրաւ Տանտիկինը և սենեակէն դուրս նստուեցաւ, զլորեցաւ աւելի ետեւէն հորուած տակառի մը պէս :

Կէս ժամէն աւելի կար որ նպարավաճառին հինգ տարեկան տղան զոր քով սենեակը պաակեցուցած էին՝ ներսի ձայններէն արթնցած՝ չուրջի մուկէն ու մենութեան հանգեկած յերկիւղ մեծ, կուլար, կը պօսար . մայրիկ, մայրիկ . իմացող ո՞վ : Խեղճին կոկորդը ալ իր վերջին ձայները հանելու վրայ էր :

— Վո՛ւյ չորնամ պիլիքիմ, ըսաւ մայրը տղան գրկած ներս մտնելով . հիւրնոնայ պիտի ետիրուս . լալէն հեղալ է եղեր . . . :

Իրաւ ցաւալի վիճակի մը մէջ կը գտնուէր իսկո՞ւ տղան . հեկեկանքներ անընդհատ կը թօթուէին զինքը . նուագած կ'իւրեւար : Սկըսան ջուրով շփել շփիլի ճակատը, երեսը, ձեռքերը . քացախ շնչել տալ, ևն .

Խանգարում մը եղաւ տիկա : Քանի մը ձախող միջնադէպներ ևս պատահեցաւ : Մէկը որ շատ խառնակ կերպով կերած էր և օղիին վրայէն գիւրի խմած՝ փոխեց ինքնաբուղի զըզուանօք և ոչ «մատնամուխ», ինչպէս կ'ըսէ

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

չէ : Իրաւ , խաղին սկզբնաւորութիւնը՝ շահու կամ վնասի անորոշ եւ ստորաւոր յուզումները ստաիծան մը մտոցնել կուտայ մեր մարմնոյն յոգնութիւնը եւ մտքին տագնապը . բայց արգիւնքը կը շարունակուի փոխանակելով : Երբ սեղանէն ելած ատենդ ինչպէս կ'ըզատ . հանդուտացած , կազդուրած , թարմացած ես : Ոչ , ընդհակառակը կ'ըզատուի կը ցաւի , մարմնոյդ մէջ ողնայար մը գտնուիլը կ'ըզատ . ծունգերդ եւ ազգրելդ ընդարմացած են . աչքերդ կը մթազնի : Աւելցուր ասոր վրայ գրպանիդ դատարկացման զգացումը , եթէ կորսնցուցած ես , եւ այն ատեն պիտի գիտնաս խաղամուրութեան օգուտները : Բայց ես յաճախ կը շահիմ , պիտի ըսէ մէկը , որովհետեւ գիտեմ ինչպէս խաղալու է . եւ այս պարագային տակ խաղին պարզեւած զուարճութիւնը կը կրկնապատկուի շահու զգացումովը : Ընդունինք թէ յաճախ շահող խաղացող մըն ես , բայց տակաւին զերծ չ'եմ մարմնաւոր վնասներէն զի րո բազմաթիւ յաճախ կը ըրէ , եւ ազատ չ'եմ վստիքարացուցիչ ազդեցութիւնէն որ քու նկարագրիդ վրայ կը ներգործէ :

Հոս խնդիր մը կը ծագի զոր լուծել հարկ է : Կրնայ յարցուիլ թէ նարտի եւ թուղթի խաղերէն իսպառ հրատարակու է : Լոկ խաղը բաղդախաղին հետ չ'իտիւլու չէ . մէկը միւսէն անհունապէս սուրբեր է : Լոկ խաղը իբր ժամանց գերծ է բարոյական վնասներէ . բայց կէտ մը կայ որ բնաւ մոռնալու չ'ենք . այսինքն թէ սրճարանի կամ կազինոյի խաղերը , ինչ անուամբ ալ անոնք կոչուին , ընդհանրապէս սկզբնաւորութիւն մը կ'ը կազմեն բաղդախաղին : Զօրաւոր փորձութիւն մը կայ մէկէն միւսին անցընելու : Ասիկա , ուրիմն նկարագրի խնդիր է . ամեն մարդ նոյն փորձութեան հանդէպ նոյն հակամտաութիւնը չ'ունենար : Մէկը կրնայ բոլոր իր կեանքին մէջ նարտ կամ թուղթ խաղալ՝ առանց անգամ մը իսկ ստակով խաղալու փորձութեան տեղի տալու . ընդհակառակը ուրիշ մը այս զօրաւոր կամքէն զրկուած կրնայ ըլլալ : Ուրիմն , ամեն մարդ ինչը ըլլալու է իր դատաւորը . եթէ վստահ եմ թէ պիտի չ'կրնամ գիտաբերել այս վստիքին մէջ ինչապէս փորձութիւնէն , լաւագոյն է որ իսպառ հրատարակու եւ խաղի սեղանին մօտ անգամ չ'երթամ : Ամեն պարագայի մէջ , տակաւն ապահովագոյն ճանապարհը՝ ոչ թէ գահաձեւիտի երկայնութեանը գացող շաւիղն է , այլ ընդարձակ եւ օդատուն պղտան որ ազատ է անկն վտանգէ :

Նարեկացիներ : Ուրիշ մը արմուկի հարուածով մը վար ձգելով կտորեց օղիի շիշերէն մէկը . բան մը որ մեծ սրտացաւ պատճառեց Տանախորջ եւ անմխիթար կացոյց յօնցաւորը :

— Խնդիրը շիշէ ինչպէս չէ , բայց մէկալին հետ չ'ի՞ք ըլլալուն . . . Ի՞նչ է նէ , ողջութիւն ըլլայ :

Միւսիւ Միւրանին առօրեայից 3 ժամ անընդատ աշխատելէն յօնած՝ բողբոջ իր կըրցած կերպովը . ըսել կուզեմ իրանգարում մը ունեցաւ , զոր ըստ նուագածուին՝ տունը միայն կարելի էր շտիկել :

Աստից է տըք քունը եկաւ , մեզ Հայոցս այնքան ծանօթ :

Այս վերջնազէպին ատենը փակուեցաւ :

Սենեակին դրան առջեւ Պախալ Սարգիս՝ ափերով , կողովներով շնորհակալութիւն , « աֆ կ'ընէք , » ներ « չէն միտք » ներ « Աստուած շատ տարիներ պարգեւէ » ներ ընդունեց եւ հրատեղաի ողջոյնը տուաւ , յուզուած ձայնով , իր հիւրերուն : Խաւ կապած ձիւնին մէջէն , փուքին մէջէն , խոշոր վերադուներու եւ շալերու մէջ գրեթէ անհետացած՝ ութը տասը լապտերներով առաջնորդուած , կէս-քուն կէս-արթուն , բայց ամբողջովին գիտով՝ ինչապէս կ'ըլլալով , իրար բռնելով կամ ձգելով , կ'իները անիծելով , էրիկ մարդիկ հայտնելով , երբեմն ալ քրքրալով՝ մեր խաղիցիները ճամբայ ելան իրենց տուները , բարեբաղդաբար շատ մօտիկ ու քովէ քով :

(Վերջ) ԴԻՏԱԿ

ՀԱՅԵՐԻ Ի ԹՈՒՐԿԻԱ . — Փառ ճ'ալեխ-աւանտի Տամանհուրի իր մէկ բաժանորդէն ըստացած նամակէ մը , որ Մէրսինէն եկած է , հետեւեալը կը քաղէ , Անատոլիի Թուրքութեան մասին : « Մանաւանդ հայերը , կը գըրէ նամակագիրը , հանապազօրեայ կեղեքման եւ յաճախակի անգթութեան զոհեր են : Մէրսինի գլխաւոր թարգմանի , բանտի պահապաններուն , զինուորներուն եւ մասամբ ալ քաղաքի կառավարիչին շտրաշար վարուեցողութեան զոհ գնաց հայ կին մը իր զուակներով » :

« Այս կնոջ վրայ ի գործ գրուած վարագութիւններու մասին , որու միջոցին մէկ տղան անմիջական կերպով մեռած է կատարուած լլկումներու պահուն , թղթակցի գրուածը զանց կ'ընենք , որովհետեւ այն պիտի մի բնաւորութիւն ունի , որ հոս զետեղել կարելի չ'է եւ որը մենք չ'ենք կարող անձամբ ճշդել » :

« Ամեն անգամ մենք չ'ենք կարող անըզգայ հանդիսատես լինել այս դժբաղդութիւններուն , որոնք մեր սրտին կը դալին . այդ նամակի մէկ պատճէնը որ մենք ըստացած ենք , կը զրկենք Օսմանեան Բարձր պատուիրակ Ղազի Ահմետ Մուխթար փաշային , որուն արգարասէր միտքը եւ զգացմանց ազնուութիւնը մեզ լաւ ծանօթ է :

Օսմանեան Բարձր պատուիրակը ողբերգական այս եղելութեան պատմութիւնը պիտի հասցնէ անշուշտ Կ . Պօլիս , եւ մենք կը վստահինք , որ երբ եղելութիւնը կը ճանչցուի պէտք եղած տեղէն , անմիջապէս հրամաններ կը տրուին (\*) առ որ անկ է՝ մասնաւոր քննութիւններ կատարելու եւ յանցաւորները պատժելու համար » :

ԿԻԼԻԿԻՅՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ .

Նոր Կենսիւն կը քաղենք : — « Պատրիարքարանը Դոնէն Էմիրնաւէներ խնդրած է Կիլիկիայ Կաթողիկոսական ընտրութեան գործողութիւնները կատարել տալու համար : Սպասուած հրամանագրերը երբոր հասնին , Խապայեան Սահակ Եպիսկոպոս Երուսաղէմէն պիտի մեկնի Կիլիկիա երթալու եւ պատգամաւորական ժողով գումարելով Կաթողիկոսական ընտրութիւնը կատարել տալու համար : Օրմանեան պատրիարքին խնամին , եւ Իմանգամայն պատրիարքարանին Դրան գործակատար , Տիգրան Տէր Նէրսէսեան , ուխտի պատրուակաւ Երուսաղէմ՝ գացած է , բուն նպատակը ըլլալով ի նպատ ֕րմանեան պատրիարքին կաթողիկոսացմանը աշխատիլ : Այցելու ուխտաւորը նախ Մերսին հանդիպելով ջանացեր է հոն մտքերը պատրաստել ի նպատ ֕րմանեանի , միւսոյն ջանքերը նաեւ Երուսաղէմ՝ կը գործադրուին :

Եթէ Օրմանեան Պատրիարքին ծրագրերը յաջողի , բնականաբար Կ . Պօլսոյ Պատրիարքական աթոռը թափուր պիտի մնայ : Հաւանական չ'է որ սուլթանը թոյլատրէ ըստ Սահմանադրութեան նոր ընտրութիւն կատարել , ուստի պէտք է որ նոր պատրիարքը ընտրուի ազգային իրաւունքներուն ջնջումովը , ու այն կանոնագրութեամբ որ Պատրիարքարանին մէջ գաղտնապէս պատրաստուած է , եւ որուն գործադրութեանը համար կ'սպասուի յարմար առթի մը : Պատ-

րիարքական նոր քննութիւն մը հարկ է որ այդ սուլթանը ներկայացնէ : Բայց հաւանական է նաեւ որ Օրմանեան Պատրիարք պատրիարքութեան եւ կաթողիկոսութեան երկու պաշտօնները ուզէ իր վրայ միացընել , առժամանակ կերպով . Ու այսպէս ճամբայ բանայ Թուրքիոյ Հայոց անջատմանը Ամենայն Հայոց Հանրապետութեան Աթոռէն : Անշուշտ Օրմանեան պատրիարք եւ իր քաղաքական մտղովը այս վերջին ծրագիրը աւելի ընդունելի պիտի գտնեն , ինչպէս եւ սուլթանն ալ » :

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիզ 29 Մայիս . — Ֆրանսական մասնաւոր կ'ըրազուի այն խնդրով որ Մառօքի սուլթանը արգար եւ իրաւացի գտած է Ֆրանսացիներու պահանջած Ալճէրական սահմաններու ճշգրտան , ինչպէս նաեւ Ֆրանսահրպատակի մը մահուան փրկանքի պահանջ : Յայտնի է թէ այս խնդրոյն համար երեք ֆրանսական պատերազմանաւեր զրկուած են Մառօք :

Սէուլ 29 Մայիս . — Բէլգիա կը զուլն մէջ քրիստոնեաներու դէմ՝ յուզում տեղի ունեցած է . կ'ըսուի թէ հոն ֆրանսական առաքելութիւն մը խոյստուած է :

Հոնկ-Բոնկ 29 Մայիս . — Վերջին շաբթուան մէջ անձանագրուած է ժամտախտի 200 դէպքեր , որոնցմէ 178 ը մեռած են :

Կ . Պօլիս 29 Մայիս . — Կ'ըսուի թէ բազմաթիւ Ալպանացի մեծեր սուլթանին առջորթ մը ներկայացուցած են բողբոջով այն սխալ լուրերուն դէմ՝ որ յարուցած էր երիտասարդ թիւրքերու կազմակերպած ընկերութիւնը :

Պրուքսէլ 29 Մայիս . — Կը ծանուցուի թէ Պօէրները Բրէթօրիայի մօտ յայթանակ մը տարած են :

Անգղիացաց կորուստը եղած է 50 մեռեալ , 159 վիրաւոր , 600 գերիներ եւ 6 թընդանօթ :

Բրէթօրիա 29 Մայիս . — Վերջին շաբթուան եղած կորուստները 49 մեռեալ եւ 100 վիրաւորեալի կը հասնին :

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԻ

Ազգատախնամ ընկերութեան Ընդհ . Ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակէ 2 Յունիս 1901 կէս օրէ յետոյ , ժամը 2 ին ազգային մանկապարտիզի սրահին մէջ :

Օրակարգ

1 . Միամեայ տեղեկագիր եւ հաշուետուութիւն Գործ . Ժողովոյ .

3 . Ընտրութիւն Գործ . Ժողովոյ :

Իւրանս պարտաւորութիւն կ'ըզայ յիշեցնել բոլոր Պատ . անգամաց թէ կանոնագրի ճրգ . յօդուածի համաձայն սոյն նստի մէջ տրուելիք որոշմունք վաւերական պիտի ըլլան եթէ ներկայից թիւն 12 էն պակաս չ'ըլլայ եւ կը խնդրէ իրենցմէ որ փութան ներկայ ըլլալ սոյն նստին եւ կատարել իրենց ընկերական պարտականութիւնն : Ի Դիմաց Ընդհ . Ժողովոյ Ազգատախնամ ընկերութեան

Ատենագիր Բ . Ատենագետ Հ . Կ . ՊէրՊէրեան Լ . Կիլիկիեան 29 Մայիս 1901 Դահլիճ

ՇՐՋԱՆԱԿԱՆ

Պ. Ս. Ֆ. ԼիկնԱն ալոբուրնէ սկսեալ գաղթած ըլլալով նիւ-եօրքի ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ Ապահովագրական Ընկերութեան Ընդհանուր Գործակալի պաշտօնէն, կը խնդրուի ՊՊ. Գեր-Գործակալներէ և Պատահատարակութենէ, մինչև նոր Ընդհ. Գործակալի մը անուանումը, ընկերութեանս վերաբերեալ գործերու համար, գիմել՝ ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ նիւ-եօրքի Ապահովագրական Ընկերութեան Արևելքի Գեր-Տնօրէն Պ. ՕՍԿԱՐ ՄԻՍԸՆԷՌԻ, ի Շէփհըրա Օթէլ և կամ Ընկերութեանս Գեր-Գործակալ առ Տ. ԳԵՌԳ ԵԿԱԻՕՅ ի Բաւաւս Մարտոպոլո նախկին Պակ Օրօնակի դէմ:

Գահիրէ 23 Մայիս 1901  
ՕՍԿԱՐ ՄԻՍԸՆԷՌԻ

ՄԹԱՌ ԼԱՅՅ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն. — Չափաւոր ապահովագրի. — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն. — Իրականաց պահպանութիւն՝ ապահովագրի վերաբերանց յապաղումի պահուն. — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարգարութիւն. — Շահու բաժանում ամեն Հինի ՏԱՐԻՆ մէկ անգամ:

Ս. ԼԵՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ԲԱՐԻՈՒՑԻ ԸՆՏԻՐ ԱՅՈՒԹ

Ունէին՝ ք մինչև ցարդ հայ մը որ գիանար մտածել թէ՛ ամուսին ալ մեծաքանակ սպասում կ'ունենայ և կ'ընայ կարեւոր շահ արտադրել:

Առեւտուրի այդ ապագայէն ալ օտարներուն թողուած էր:

Տար Գալոր վարդանեան (Սանտահանի քետորդի) այժմ ամենաբնախոր ամուսին վաճառակառնութեամբ կ'զբաղի և մրցում բացած է օտարներուն դէմ:

Գիմեցէ՛ք իր միջերանցը Սուգ-Խուտար թիւ 17 և 18:

Անխարդախ կշիռ և չափաւոր դին:

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՄԻՄՈՆ ՅԵԼԷԿԵԱՆԻ ԵՒ ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Գին 10 Գահիրէի ողջ:

ՀՅԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ


ՈՒՐԱԹ 31 ՄԱՅԻՎ 1901

Table with 6 columns of numbers: 3644, 5686, 3208, 7335, 6531, 3232; 5090, 7755, 9936, 2179, 3396, 6260; 4579, 8380, 1576, 9341, 1874, 3739; 8960, 3520, 4530, 4846, 3805, 2371; 5453, 6225, 19

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ  
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐԱՌՈՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ  
Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:  
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ օրե է ընկերութենէ մէկ միլեար աւելի է:  
ԳԵՌԳ ԵԿԱԻՕՅ ներկա յաջուցիչ ի Գահիրէ  
Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:  
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակալաւոր յԱզե քաղաքիս:

Ս Ի Ն Կ Է Ր  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ  
Պալաքի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ գիմաց, Գահիրէ Տր Լա Պուրսի կից:  
Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ  
Աշխարհի ամենէն բազմաթիւ կարի մեքենաները Սինկէր ներն են և ասոնց՝ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:  
400 է աւելի վիսյախաններով և սէսայներով վարձարուած, երաշխաւոր է մեքենաներ,  
ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ  
Փարիզի 1900 ի Տիեզերական առաջնահարկի մէջ ստացած է:  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԱՐԲՈՒՆԻՔԻՆ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ-ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ  
Կեզներէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկէր ի յաւկանչիւն:  
Գին ՉԱՓԱՒՈՐ  
Չրի դասեր և նորագութիւններ, Սինկէր մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:  
Վճարմանց Դիւրութիւն  
Փոխանակութիւններ մեքենայից Եւ նորագութիւն ամեն կարգի Մեքենայից



ԿՕՇԿԱԿԱՐ  
Գ. ԵՒ Յ. ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԱՐԱՐԻ  
Պաղատ-Մուրուր ք/ն 39

Կ'ուզէ՛ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող, օտքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող և դիմացկուն կոշիկներ:

Գիմեցէ՛ք ի Պաղատ-Մուրուր թիւ 39 խանութիւն մէջ հաստատուած Պէշիրեան եղբարց, որոնց գործածած ապրանքներու տուրքները և ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է:

Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց ըբած յանձնարարութիւնները վաւթով և մեծ խնամով կը պատրաստեն:

Բաւ է միայն մէկ անգամ գիմել իրենց, ապահովապէս մնայուն յաճախորդ պիտի լինիք:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
ԵՒ ԹՂԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»  
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԻՐԸ  
Օտեսիյե դեղատանին դիմացի փողոցի մէջ:

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երաշխարհաներ, Գիւրեր, Հրախարտեր, Մանագրներ, Տեղեկագրներ, Կանոնագրներ, Տոմսեր և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ գրքերն:

- 1. ԲՆԱՇԻՄԱՐ ՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն:
- 2. ՈՐԲՈՒՆԻ որոյ թուրքիս մուտքը, ինչպէս կը լսենք, արգիւրած է:
- 3. ՀԱԽԱՔԱՄՈՑ հայոց ժողովրդական երգերու: